ԳՐԱԼԽՕԱՌՈՒԹԻՒՆ. ԱՌՑԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ԼՈՒՍԻՆԵ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ԱՂԹԱՄԱՐԻ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ

Աղթամարի Ս. Խաչ վանքը մեծ եւ ուրոյն դեր է ունեցել հայ գրչության եւ մանրանկարչության արվեստների զարգացման գործում: Դարեր շարունակ վանքի աղոթասեր միաբաններն այստեղ ընդօրինակել են գրչագրեր եւ ծաղկել դրանք երփներանգ գույներով մագաղաթ ու թուղթ կոկել, թանաք պատրաստել, զբաղվել կազմարարությամբ եւ այլն: Ցավոք, այստեղ գրված եւ նկարազարդված ձեռագրերի մի զգալի մաս կորստյան է մատնվել տարաբնույթ պատճառներով: Ստորեւ մենք կփորձենք համառոտ ներկայացնել Աղթամարի գրչության կենտրոնի պատմությունը, ըստ գրիչների եւ մեզ հայտնի ձեռագրերի:

Հարկավ, Աղթամարում ձեռագրեր են գրվել նաեւ ավելի վաղ, հատկապես 1113 թվականից հետո, երբ Արծրունյաց Դավիթ եպիսկոպոսը հիմնեց տեղի կաթողիկոսական Աթոռը, սակայն գրչության կենտրոնից մեզ հասած հնագույն ձեռագիրը գրվել է 1277 թվականին **Սիմեոն** գրչի ձեռքով (ՄՄ, ձեռ. թիվ 208). «... գրեցաւ ծաղկազարդ եւ փիլիգերալոյս Գործք սրբոց Առաքելոցն ձեռամբ յոգնամեղ ոգւոյ Սիմէոնի, ի խնդրոյ Խաչատուր քահանայի, ի կղզիս Աղթամար, ընդ հովանեաւ Սուրբ Խաչին»[1]:

ԺԴ դարում հանդիպում ենք Դանիել կրոնավոր, Կարապետ կրոնավոր, Զաքարիա կրոնավոր, Կարապետ քահանա, Գրիգոր, Ավագ գրիչներին: Ընդ որում, Զաքարիան եւ Դանիելը նաեւ ծաղկել են ձեռագրեր: Ներկայացնենք այս արդյունավոր գրիչներին:

Դանիել կրոնավոր

Դանիել կրոնավորը որպես իր ուսուցիչ է հիշում Սիմեոն պատվական եւ սրբասեր քահանային. վերջինս թերեւս վերը նշված Սիմեոն գրիչն է: Դանիել գրիչի ծնողներն են Շահապը եւ Թամարը. 1306 թ. նրանք արդեն վախճանվել էին: Գրիչն իր հիշատակարաններում նշում է նաեւ իր եղբայրներին ու քույրերին, իր հոգեւոր եղբայրներին՝ Ստեփանոս եւ Հովհաննես կրոնավորներին, որոնք հաճախ էին օգնում ջանադիր գրչին՝ թուղթ տրամադրելով:

Դանիել գրչից մեզ հասած առաջին ձեռագիրը Թովմա Արծրունու «Պատմութիւն տանն Արծրունեաց» երկն է, 1303 թ. (ՄՄ, ձեռ. թիվ 10451). ձեռագիրը գրվում է Զաքարիա Ա Աղթամարցի Կաթողիկոսի պատվերով Սյունյաց արքեպիսկոպոս Ստեփաննոս Օրբելյանի համար: 1306 թ. Դանիել գրիչն ընդօրինակում է Սարգիս Շնորհալու «Մեկնութիւն Կաթողիկեայց թղթոց» երկը կրկին Զաքարիա Աղթամարցի Կաթողիկոսի պատվերով, այս անգամ Լիմ անապատի համար (ձեռագիրը մեզ չի հասել), 1307 թ.՝ Կյուրեղ Երուսաղեմացու «Կռչումն ընծայութեան» երկը (ՄՄ, ձեռ. թիվ 4881)[2], 1309 թ.՝ Պողոս առաքյալի թղթերը (ձե-

1 «Մայր ցուցակ հայրենէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի», հ. Ա, Եր., 1984, էջ 929-932: «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», ԺԴ դար, կազմ.՝Ա. Մաթեւոսյան, Եր., 1984, էջ 469-470:

2 Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԴ դար, էջ 12-14, 40-41:

ռագիրը կորած է)[3], 1312 թ.՝ Ճաշոց, որը 1371 թ. հավելում է Զաքարիա գրիչը (ՄՄ, ձեռ. թիվ 4687), 1312 թ.՝Մաշտոց (ՄՄ, ձեռ. թիվ 4801), 1313 թ.՝ Ճաշոց (ՄՄ, ձեռ. թիվ 4890), 1316 թ.՝ Ժողովածու (ՄՄ, ձեռ. թիվ 976). ընդ որում 1316 թ. նա արդեն եպիսկոպոս է[4]:

Կարապետ կրոնավոր

Դանիել եպիսկոպոսի աշակերտն է իր եղբոր՝ Թովմայի որդի Կարապետ կրոնավորը: Կարապետ գրիչի ընդօրինակմամբ մեզ հայտնի են հետեւյալ ձեռագրերը. Ճաշոց, 1319 թ. (ՄՄ, ձեռ. թիվ 4738), Սարգիս Շնորհալու «Մեկնութիւն Կաթողիկեայց թղթոցը», 1333 թ. (ՄՄ, ձեռ. թիվ 4674), Աւետարան, 1354 թ. (ՄՄ, ձեռ. թիվ 2843), որի ծաղկողը Զաքարիան է, 1358 թ.՝ Աւետարան (ձեռագիրը կորած է)[5]:

Կարապետ կրոնավորի աշակերտներն են Զաքարիա եւ Կարապետ գրիչները: Ըստ Զաքարիայի 1371 թ. ընդօրինակված Ճաշոցի հիշատակարանի, այս թվականին Կարապետ կրոնավորն արդեն վախճանվել էր:

Զաքարիա Աղթամարցի

Զաքարիայի ծնողներն են Մկրտիչ քահանան եւ Թանկ խաթունը, եղբայրներն են Կարապետ քահանան, Հովհաննեսը եւ Խաչիկը. ընդ որում Կարապետը եւս ընդօրինակում էր ձեռագրեր, իսկ Հովհաննեսը՝ թուղթ կոկում: Նրանց ուսուցիչը, ինչպես արդեն նշել ենք, Կարապետ կրոնավորն է: Ըստ 1371 թ. գրչի փված տեղեկատվության՝ բավականին սակավաթիվ կրոնավորներ կային Աղթամարում, նրանք 15 հոգի էին. «տէր Ներսէս Կաթողիկոս՝ հեզահոգի եւ աննենգ սրտիւ եւ հոգով, եւ ազգական նորին՝ տէր Զաքարայ՝ սրբահոգի եւ առաքինի եւ ժիր քան զամենայն, եւ պատուական ծերունի եւ ալեւք ծաղկեալ հարքս մեր՝ զԿարապետ կրաւնաւոր, զՍարգիս, եւ զԾերուն, որ են մեզ խրատատուք եւ պահապան եւ քաջալերիչ ի գործս բարիս եւ ի վարս առաքինութեան, ընդ նոսին եւ զմեր ընկերակիցքս՝ զԳրիգոր եւ զՍտեփանոս, զԹումայ եւ զԱստուածատուր, զԿոստանդ եւ զԽաչիկ, զԱւետիս եւ զՏիրացու, եւ զեղբայրս մեր՝ զԿարապետ քահանայ»[6]:

Զաքարիային որպես մանրանկարիչ անդրադարձած Հ. Հակոբյանը նրա մասին գրում է. «Զաքարիայի գործունեությունն ընդգրկում է մոտ 45 տարվա ժամանակահատված (1355-1403թթ.): Նա վայելել է մեծ հեղինակություն: Նրան անվանել են «վարպետ գրագիր», «փիլիսոփայ»: Երկրի տարբեր գավառներից նրա մոտ եկել են աշակերտելու, պատվիրել են ձեռագրերի նկարազարդումներ...»[7]:

1371 թ. Զաքարիա փիլիսոփայի ընդօրինակած Ճաշոցը մեկ ամբողջություն է կազմում 1312 թ. Դանիել գրչի ընդօրինակած Ճաշոցի հետ (ՄՄ, ձեռ. թիվ 4687): 1385 թ. գրիչն ընդօրինակում է եւս մեկ Ճաշոց (ՄՄ, ձեռ. թիվ 4870), 1390 թ.՝ Աւետարան (ՄՄ, ձեռ. թիվ 4941). վերջինիս կազմողը Սարգիս քահանան է: 1393 թ. նա ընդօրինակում եւ ծաղկում է Աւետարան (ՄՄ, ձեռ. թիվ 4908), որը կազմում է Եղիա Արգիլանցին, 1399 թ.՝ Աւետարան (ՄՄ,

3 Ցուցակ հայերէն ձեռագրաց Ս. Նշանի վանուց ի Սեբաստիա, կազմ.՝ Թորգոմ արքեպ. Գուշակեան, Վիեննա, 1961, թիւ 3:

4 Տե՛ս «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», ԺԴ դար, կազմ. Լ. Խաչիկյան, Եր., 1950, էջ 46-48, 85-87, 93-94, 120:

5 Տե՛ս «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», ԺԴ դար, էջ 154-155, 259-260, 408-409, 440:

6 «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», ԺԴ դար, էջ 495-496:

7 **Հ. Հակոբյան,** Վասպուրականի մանրանկարչությունը, գիրք Ա, Եր., 1976, էջ 73:

ձեռ. թիվ 5510)[8]: Անթվական են Զաքարիայի ընդօրինակած երկու աւետարաններ. սրանցից առաջինը նկարագրդում է Թուման (ՄՄ, ձեռ. թիվ 10522)[9]: Զաքարիա կրոնավորը նաեւ շնորհալի ծաղկող է: Նա, բացի իր՝ 1393 թ. գրած Աւետարանից, ծաղկել է իր եղբայր Կարապետ գրչի՝ 1354 թ., Ավագ գրչի՝ 1377 թ. գրած ավետարանները, Թումայի հետ միասին՝ Գրիգոր գրչի՝ 1355 թ. Աւետարանը:

Կարապետ քահանա

Զաքարիա գրչի եղբայրն է Կարապետ քահանան (կողակիցը՝ Դուռմելեք):

1368 թ. նա ընդօրինակում է Աւետարան (ՄՄ, ձեռ. թիվ 10116), 1373 թ.՝ Թումայ անունով աբեղայի հետ Ժողովածու (ՄՄ, ձեռ. թիվ 2001), 1378 թ.՝ Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» աղօթագիրքը (ՄՄ, ձեռ. թիվ 5558[10]), 1389 թ.՝ Ճառընտիր[11], 1392 թ.՝ Աւետարան[12]: Զաքարիա կրոնավորի եւ Կարապետ քահանայի արվեստի շարունակողներն են Կարապետի որդիներ Դանիել եւ Թումա գրիչները, եղբոր որդիներ Թումա կրոնավորը եւ Գրիգորը. նրանց մասին՝ քիչ ավելի վար:

Գրիգոր գրիչ

Գրիգոր գրիչի ծնողներն են Անդրեասը եւ Փառացը, վարժապետները՝ Մխիթարը եւ Տիրատուրը: Գրիչը 1353-54 թթ. ընդօրինակում է Ժողովածու (ՄՄ, ձեռ. թիվ 5600), 1355 թ.՝ Աւետարան, որը ծաղկում են Զաքարիա փիլիսոփան եւ Թումա քահանան (ՄՄ, ձեռ. թիվ 4915), իսկ ձեռագրի համար թուղթ է կոկում եւ վարպետներին «սպասաւորում»՝ Տոնապետը[13]:

Ավագ դպիր

Ավագ գրիչից միայն մեկ Աւետարան է մեզ հասել՝ գրված 1377 թ.: Վաղաժամ մահվան պատճառով գրիչը չի հասցնում այն գլխագրել եւ ծաղկել, ուստի եւ նրա գործը շարունակում է Զաքարիա փիլիսոփան (ՄՄ, ձեռ. թիվ 6402)[14]:

ԺԴ դարի գրիչների եւ ձեռագրերի մասին խոսքն ավարտելով՝ ավելացնենք, որ որոշ տվյալների համաձայն 1363 թ. Աղթամարի վանքում գրվել է եւս մի Աւետարան: Յավոք, ձեռագիրը կորած է, եւ անհայտ է նաեւ գրիչի անունը[15]:

Ի տարբերություն այլ դարաշրջանների, ԺԵ դարում Աղթամարում գրված ձեռագրերն ավելի մեծաքանակ են: Առաջին գրիչը, որին մենք հանդիպում ենք այս դարաշրջանում, Դանիել քահանան է:

Դանիել քահանա

Գրիչը Կարապետ քահանայի որդին է: Նա իր հորից եւ հորեղբորից՝ Զաքարիա փիլիսոփայից է սովորել գրչության եւ մանրանկարչության արվեստները: Դանիելի կրտսեր

8 Տե՛ս «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», ԺԴ դար, էջ 495-496, 553-554, 583-584, 605-606, 624:

9 Երկրորդ ձեռագիրը մեզ չի հասել. տես **Յակոբ Ծ. վ. Քօսեան**, Ցուցակ հայերէն ձեռագրաց Արծնեան վարժարանի ի Կարին. «Հանդէս ամսօրեայ», 1961-1962 թթ., թիւ 19:

10 «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», ԺԴ դար, էջ 527:

11 Սույն ձեռագիրը մեզ չի հասել, տե՛ս «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», ԺԴ դար, էջ 577-580:

12 Այս ձեռագիրը մեզ չի հասել. «Ցուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի», կազմ. Երուանդ Լալայեան, Թիֆլիս, 1915, թիւ 107:

13 «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», ԺԴ դար, էջ 405, 413-414:

14 Տե՛ս անդ, էջ 522:

15 "Die Armenischen handschriften des klosters von Argni (Arghana)". Von dr. Friedrich Müller. Wien, 1896, p. 3, nr. 119.

եղբայրը Թումման է, որն օգնում էր նրան թուղթ կոկելով. միաժամանակ եղբորից սովորում է գրչության արվեստը: 1436 թ. Դանիել գրիչն արդեն քահանա է, այս թվականին ընդօրինակած իր գրչագրում նա հիշում է կնոջը՝ Շամսա-Հաթունին եւ իրենց զավակներին: 1441 թ. Աւեւարանում Դանիելի որդիներից Սրեփաննոսն արդեն նշված է որպես կրոնավոր, Հովհաննեսն ու Զաքարիան՝ օգնում են իրենց հորը թուղթ կոկելով: Ձեռագրում գրիչը սիրով պատմում է նաեւ վանքի միաբանների անունները՝ «զսպասաւորքս սուրբ փառարիս՝ զմեծ փիլիսոփայքն զԹումայ, եւ զՍարգիս, եւ զԽաչիկ, եւ զՈհաննէս, եւ զԱւետիս, եւ զՀէրապետ, զՅովաննէս փակակալ, եւ զԲարսեղ, եւ զՅովաննէս, եւ զՅուսէփ, եւ զաշակերտքն մեր՝ զՈհաննէս եւ զՀէրապետ, որ հանապազ աղօթեն բազկապարած մաղթանօք զփրկութիւն ամենայն աշխարհի»[16]:

Դանիելից մեզ հայտնի վաղագույն ձեռագիրը 1403 թ. Աւետարանն է, որ նա գրում է իր հոր՝ Կարապետ քահանայի հետ: Այն նկարազարդում է Զաքարիան, կազմում՝ Մկրտիչ եպիսկոպոսը (ՄՄ, ձեռ. թիվ 4923): 1404 թ. Դանիելն ընդօրինակում է Մաշտոց (ՄՄ, ձեռ. թիվ 4787), 1409 թ.՝ Ճառընտիր (ՄՄ, ձեռ. թիվ 994), 1412 թ.՝ Ճաշոց (ՄՄ, ձեռ. թիվ 9093): 1436 թ. Դանիել քահանան գրում, ծաղկում եւ կազմում է Աւետարան (ՄՄ, ձեռ. թիվ 5543), 1441 թ.՝ Աւետարան, որը ծաղկում է Թումա Մինասենցը (ՄՄ, ձեռ. թիվ 5515)[17], 1444 թ.՝ Ճաշոց (ձեռագիրը կորած է)[18]:

Թումա կրոնավոր (որդի Կարապետի)

Թումա գրիչը Դանիել գրիչի կրտսեր եղբայրն է եւ աշակերտը, նրա հայրը Կարապետ քահանա գրիչն է, հորեղբայրը՝ Զաքարիա փիլիսոփան: Թումայից մեզ հասել է մի Աւետարան, գրված 1418 թ., որը մանրանկարել եւ կազմել է Դանիել քահանան (ՄՄ, ձեռ. թիվ 5512)[19]: 1422 թ. Թումման ավարտում է Վարագա վանքում սկսված Աստուածաշնչի ընդօրինակումը (ՄՄ, ձեռ. թիվ 207)[20]: 1426 թ. Թումման ընդօրինակել է եւս մի Աւետարան[21]:

Թումա կրոնավոր (որդի Խաչիկի)

Թումա կրոնավորն ու նրա եղբայր Գրիգոր քահանան Կարապետ եւ Զաքարիա գրիչների եղբոր՝ Խաչիկի զավակներն են, նրանց մայրը Ազիզմելեքն է: 1421 թ. Թումա կրոնավորը, որին կոչել են հոչակավոր քարտուղար, գրում եւ ծաղկում է Ճաշոց (ՄՄ, ձեռ. թիվ 4695)[22]:

Աղթամարի վանքում գրված, սակայն կորած երեք ձեռագրերի մասին եւս մենք ունենք տեղեկություններ, որոնցից յուրաքանչյուրի գրիչն իրեն անվանում է Թումա կրոնավոր: Սրանցից առաջինը Աւետարան է եւ գրվել է 1918 թ.[23], երկրորդը՝ ճաշոց է, գրվել է 1419 թ.[24],

16 «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», ԺԵ դար, հ. Ա, կազմ.՝ Լ. Խաչիկյան, Եր., 1955, էջ 524:

17 «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», ԺԵ դար, հ. Ա, էջ 40-41, 47, 97, 135-136, 463-464, 524-525:

18 Տես **Ղ. Փիրղալեմեան,** Նօտարք հայոց, Կ.Պոլիս, 1888, էջ 134-135:

19 «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», ԺԵ դար, հ. Ա, էջ 216-217:

20 «Մայր ցուցակ հայրենէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարան», հ. Ա, էջ 921-930:

21 «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», ԺԵ դար, հ. Ա, էջ 357: 1433. Ուրանց գյուղում Թումման ընդօրինակում է Աւետարան եւ նշում, որ պատերազմի հետեւանքով իրենք փախստական են եղել Աղթամարից (տես «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», ԺԵ դար, հ. Ա, էջ 433: ՄՄ, ձեռ. թիւ 4963):

22 Տես անդ, էջ 251-252:

23 Տես «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», ԺԵ դար, հ. Ա, էջ 217: **Ե. Լալայեան,** Ջաւախք, հ. Բ, Թիֆլիս, 1897, էջ 310:

24 Տես «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», ԺԵ դար, հ. Ա, էջ 230:

երրորդը՝ Յայսմաւուրք, գրվել է 1442 թ.[25]: Պահպանված համառոտ հիշատակարանները հիմք են տալիս ենթադրելու, որ սրանցից առաջին երկուսը պատկանում են երկրորդ Թումա կրոնավոր գրիչին, իսկ երրորդը՝ Դանիել գրիչի եղբայր Թումա կրոնավորին:

Գրիգոր քահանա

Խաչիկի որդի Գրիգոր գրիչը (Թումայի եղբայրը) 1444 թ. ընդօրինակել է Յայսմաւուրք (ՄՄ, ձեռ. թիվ 3806), նույն թվականին՝ Մաշտոց (ՄՄ, ձեռ. թիվ 4846), 1449 թ.՝ Աւետարան (ՄՄ, ձեռ. թիվ 4928), 1452 թ.՝ Աւետարան (ՄՄ, ձեռ. թիվ 4830), 1454 թ.՝ Աւետարան (ՄՄ, ձեռ. թիվ 9274)[26], 1454 թ.՝ Աւետարան[27]: 1461 թ. Գրիգոր քահանան գրում է Ճառընտիր (ձեռագիրը կորած է)[28]:

Գրիգոր քահանայի որդին է Թումա քահանան, որը նախապես օգնում էր հորը՝ ձեռագրերի թուղթը կոկելով: Մեզ են հասել նաև երեք ձեռագրեր՝ գրված նրանց երկուսի կողմից, այդ ժամանակ Թումման արդեն քահանա է. 1461 թ., Մաշտոց (ՄՄ, ձեռ. թիվ 7846), 1462 թ., Աւետարան (ՄՄ, ձեռ. թիվ 7632), 1463 թ., Մաշտոց (ՄՄ, ձեռ. թիվ 2788)[29]:

Թումա քահանա (որդի Գրիգորի)

Թումա քահանան, ինչպես նշեցինք, իր հորից՝ Գրիգոր քահանայից է սովորել գրչության արվեստը եւ նրա հետ գրել առաջին ձեռագրերը: Թումման 1499 թ. իր հիշատակարանում նշում է նաեւ իր հորեղբորը՝ Թումա կրոնավորին եւ ասում, որ նա հոչակավոր քարտուղար էր Կոռճով մականունով:

1463 թ. Թումման ընդօրինակում է Մաշտոց (ձեռագիրը մեզ չի հասել)[30], 1471 թ.՝ Աւետարան, որը մանրանկարում է Դարապետ քահանան՝ գրիչի համշիրակ (այսինքն՝ կաթնակից) եղբայրը (ՄՄ, ձեռ. թիվ 2632), 1476 թ.՝ եւս մի Աւետարան (ՄՄ, ձեռ. թիվ 5333), 1484 թ.՝ Գանձարան (ՄՄ, ձեռ. թիվ 4767), 1494 թ.՝ Աւետարան (Նոր Ջուղա, ձեռ. թիվ 403), 1499 թ.՝ Մաշտոց, որը նկարազարդում է Հովսեփ ծաղկողը (ՄՄ, ձեռ. 6326)[31]:

Թումա Մինասենց

Գրիչ եւ մանրանկարիչ Թումա կրոնավորը ինչպես գրչության արվեստի, նույպես եւ մանրանկարչության հիանալի գիտակ է: Նրա ծնողներն են Սիմեոնը եւ Արղունը, իր երախտավոր ուսուցիչն է քեռին՝ Թումա միայնակյացը: Գրիչը հիշում է նաեւ իր հորեղբորը՝ Վարդանին եւ նրա որդուն՝ Մկրտիչ կրոնավորին: Վերջինս 1425 թ. նկարազարդում է Թումայի ընդօրինակած ձեռագիրը, իսկ 1428 թ. իր ձեռագրում Թումման հիշում է նրան ննջեցյալների շարքում: Թումա Մինասենցը եղել է բանուսույց վարդապետ. նրա աշակերտներից է քրոջ որդին՝ Հայրապետ սարկավագը (տե՛ս Հայրապետ գրիչ): 1445 թ. իր Գանձարանում Թումման նշում է մեկ այլ աշակերտի եւս՝ Ներսես սարկավագին, որը կոկել էր ձեռագրի թուղթը (տե՛ս Ներսես գրիչ):

---

25 Տե՛ս անդ, էջ 538-539:

26 Տե՛ս անդ, էջ 569-572, 634: «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», ԺԵ դար, հ. Բ, կազմ.՝ Լ. Խաչիկյան, Եր., 1958, էջ 20-22, 45:

27 Տե՛ս «Յուցակ հայերէն ձեռագրաց ի Բուլգարիա», կազմ.՝ Ներսէս Գասպարեան, խմբ.՝ Օ. Եգանեան, թիւ 5:

28 **Ղ. Փիրղալեմեան,** Նօտարք հայոց, էջ 199-200, թիւ 237, նաեւ՝ «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», ԺԵ դար, հ. Բ, էջ 163:

29 Տե՛ս «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», ԺԵ դար, հ. Բ, էջ 161-162, 184-186, 198-199:

30 Տե՛ս **Ղ. Փիրղալեմեան,** Նօտարք հայոց, էջ 216, թիւ 249:

31 «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», ԺԵ դար, հ. Բ, էջ 324-325, 406-407: «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», ԺԵ դար, հ. Գ, կազմ.՝ Լ. Խաչիկյան, Եր., 1967, էջ 64, 202, 284-285:

1420 թ. Թումա Մինասենցն ընդօրինակում է Աւետարան (ՄՄ, ձեռ. թիվ 5514), 1425 թ.՝ մեկ այլ Աւետարան, որը ծաղկում է նրա հորեղբորորդին՝ Մկրտիչ կրոնավորը (ՄՄ, ձեռ. թիվ 5542): Թումա Մինասենցը 1428 թ. գրում եւ մանրանկարում է հերթական Աւետարանը, որի համար թուղթ պատրաստելիս օգնում է նրա քրոջ որդին՝ Հայրապետ սարկավագը (ՄՄ, ձեռ. թիվ 6324): 1444 թ. Թումման արդեն իսկ վերը հիշված իր աշակերտ Հայրապետ աբեղայի հետ միասին ընդօրինակում է մի Աւետարան, ապա՝ ինքը ծաղկում եւ կազմում է այն. ի դեպ, նկարում է նաեւ սրացողներին՝ եղբայրներ Ծերուն աբեղային եւ Թումային (ՄՄ, ձեռ. թիվ 4829): 1445 թ. նա գրում, նկարազարդում եւ կազմում է մի Գանձարան (ՄՄ, ձեռ. թիվ 5521)[32], նույն թվականին՝ Մաշտոց (ձեռագիրը կորած է)[33]: 1447 թ. Մովսես Ուրանցու խնդրանքով գրում, նկարազարդում եւ կազմում է Աւետարան (ՄՄ, ձեռ. թիվ 4436), հիշատակարանում նշելով, որ ինքը ծերացած եւ տկարացած էր, սակայն, չցանկանալով մերժել ձեռագրի պատվիրատուին՝ Մովսես քահանային, ընդօրինակում է մատյանը. «Եւ արդ, ես՝ ...Մինասենց Թումայս, անուամբ եւ եթ աբեղայ՝ եղկելի ոգիս, տեսի զփափագ եւ զսէր Մովսէս քահանային, զոր ունէր առ հոգեւորսն, եւ իմով ծերացեալ անձամբս եւ տկարացեալ մարմնովս յանձն առի գրծագրել զսա իմով իսկ մեղսամած մատամբս, եւ ամենակարող զաւրութեամբն Աստուծոյ կատարեցի զաստուածախօս կրտակս զայս յաստուածապահ կրոգիս Աղթամար, ընդ հովանեաւ գերահռչակ եւ երկնանման Սուրբ Խաչ տաճարիս, եւ Սուրբ Փրկչիս, եւ Սուրբ Աստուածածնին, եւ Սուրբ Սարգիս Զաւրավարիս, ի հայրապետութեան տեառն Զաքարիայի, եւ ի թվականութեան Հայկազեան տօմարիս ի յութհարիւր եւ ինսուն եւ վեց (1447)»[34]: 1452 թ. գրիչն ընդօրինակում է Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» աղոթագիրքը (ձեռագիրը կորած է)[35]: 1455 թ. Թումման սկսում է մի Ճաշոց ծիսամատյանի ընդօրինակությունը, սակայն վախճանվում է՝ ձեռագիրը ավարտին չհասցրած: Այն շարունակում է Հայրապետ աբեղան:

Հայրապետ աբեղա

Հայրապետ աբեղան Թումա Մինասենց գրչի եւ մանրանկարչի քրոջ որդին է եւ աշակերտը: Նրա ծնողները Խաչատուրն ու Ոսկեփիկինն են, եղբայրը՝ Հովհաննեսը: Հովհաննեսի որդի Կարապետ քահանան Հայրապետ գրչի աշակերտն է: Նա նաեւ մանրանկարիչ է եւ ծաղկում է Հայրապետի գրչագրերը:

Առաջին ձեռագիրը, որը մեզ հասել է նրանից, գրել է իր ուսուցիչ Թումա Մինասենցի հետ 1444 թ. (ՄՄ, ձեռ. թիվ 4829): 1446 թ. Թումա Մինասենցի պատվերով Հայրապետը Աւետարան է ընդօրինակում (ձեռագիրը կորած է)[36]: 1455 թ. նա ավարտին է հասցնում իր ուսուցչի սկսած Ճաշոցը (ՄՄ, ձեռ. թիվ 9216), 1459 թ. ընդօրինակում է Աւետարան, որը ծաղկում է իր եղբորորդին՝ Մուրատ սարկավագը (հետագայում՝ Կարապետ քահանա) (ՄՄ, ձեռ. թիվ 5417), նույն թվականին մեկ Աւետարան եւս (ձեռագիրը կորած է)[37], 1467 թ.՝ Ճառընտիր (ձեռագիրը կորած է)[38], 1470 թ.՝ հերթական Աւետարանը (ՄՄ, ձեռ. թիվ 8928),

32 «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», ԺԵ դար, հ. Ա, էջ 238-239, 326-327, 374-378, 562-566, 582-584:

33 **Ղ. Փիրղալեմեան,** Նօտարք հայոց, էջ 136-139, թիւ 149: Սույն ձեռագիրը գրվել է Վասպուրականի Կապուր Կողան բերդի մոտ գտնվող Ս. Հակոբ վանքի համար, ուր եւ տրված է վանքի վերանորոգման պատմությունը:

34 «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», ԺԵ դար, հ. Ա, էջ 608-609:

35 **Ղ. Փիրղալեմեան,** Նօտարք հայոց, էջ 170, թիւ 189:

36 Տե՛ս «Յուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի», թիւ 168:

37 **Ղ. Փիրղալեմեան,** Նօտարք հայոց, էջ 193, թիւ 230:

38 Տե՛ս անդ, էջ 231, թիւ 275: Ըստ գրչի հիշատակարանի այս ձեռագիրը գրվել է մասամբ Ս. Էջմիածնում,

1471 թ.՝ Մաշտոց (ՄՄ, ձեռ. թիվ 4775), 1476 թ.՝ Ճառընտիր (ձեռագիրը կորած է)[39], 1478 թ.՝ Աւետարան (Նոր Ջուղա, ձեռ. թիվ 527)[40], 1480 թ.՝ Մաշտոց (ՄՄ, ձեռ. թիվ 5581), 1484 թ.՝ Աւետարան (ձեռագիրը կորած է), 1490 թ.՝ Աւետարան (ՄՄ, ձեռ. թիվ 7585)[41]: Հայրապետ աբեղայի ձեռագրերի մեծ մասը ծաղկել է նրա եղբորորդին՝ Կարապետ քահանան (1470, 1471, 1478, 1490 թթ. գրվածները): 1492 թ. Հայրապետ աբեղան Կարապետ քահանայի հետ ընդօրինակում է Մաշտոց (ՄՄ, ձեռ. թիվ 4201): Կարապետ քահանան նաեւ ծաղկում եւ կազմում է այս ձեռագիրը:

Կարապետ քահանա

Կարապետ ծաղկողի (մինչ քահանայությունը՝ Մուրատ սարկավագ) ծնողներն են Հոհաննեսն ու Շարմելիքը, հորեղբայրը՝ Հայրապետ աբեղան: Նրա ուսուցիչը Մինասն է, ինչպես ինքը նշում է Հակոբ կրոնավորի՝ 1460 թ. ընդօրինակած եւ իր ծաղկած ձեռագրում (ՄՄ, 7627): Կարապետը ծաղկեցրել է Հայրապետ աբեղայից մեզ հասած գրեթե բոլոր ձեռագրերը, Ներսես եւ Հակոբ կրոնավորների ընդօրինակած գրչագրերից: Մեզ հասել է Մաշտոց, որը նա 1492 թ. ընդօրինակել է Հայրապետ աբեղայի հետ, ապա ծաղկել եւ կազմել է (ՄՄ, ձեռ. թիվ 4201): 1496 թ Կարապետը գրում եւ ծաղկում է եւս մեկ Մաշտոց (ձեռագիրը կորած է)[42], 1498 թ.՝ Աւետարան (ՄՄ, ձեռ. 4955)[43], Մաշտոց (ՄՄ, ձեռ. 5181)[44], 1501 թ.՝ Մայր Մաշտոց (ձեռագիրը կորած է)[45]:

Ներսես գրիչ

Ներսես գրիչի ծնողներն են Գուրջիբեկն ու Էմնա խաթունը, ուսուցիչը՝ Թումա Մինասենը: Ներսեսի եղբայրը Ստեփանոս կրոնավորն է, որը հետագայում դառնում է Աղթամարի Կաթողիկոս (1465 – 1489):

1449 թ. Ներսես գրիչն ընդօրինակում է Աւետարան (ձեռագիրը կորած է)[46]: Ըստ մեր ունեցած տվյալների՝ 1457 թ. Ներսես աբեղան եւս երկու Աւետարան է ընդօրինակել. սակայն դրանք մեզ չեն հասել[47]: 1458 թ.՝ գրել է Աւետարան (ՄՄ, ձեռ. թիվ 3848), որում նրան օգնում է Թումա քահանան, 1460 թ.՝ Աւետարանը (ՄՄ, ձեռ. թիվ 5544)[48], 1461 թ.՝ Աւետարան (ձեռագիրը կորած է)[49]: 1470 թ. նա արդեն եպիսկոպոս է եւ ընդօրինակում է Մաշտոց, որը ծաղկում է Կարապետ քահանան (ՄՄ, ձեռ. թիվ 5702): 1475 թ. Ներսես գրիչը, արդեն արքեպիսկոպոս, ընդօրինակում է Աւետարան, որի հիշատակարանում նշում է ծնողներին, նաեւ եղբորը՝ Ստեփանոսին, որն արդեն Աղթամարի Կաթողիկոսն էր (Նոր Ջուղա, ձեռ.

մասամբ՝ Աղթամարում:

39 Տե՛ս «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», ԺԵ դար, հ. Բ, էջ 407:

40 «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», ԺԵ դար, հ. Բ, էջ 431:

41 1455, 1459, 1470, 1471, 1480 թթ. գրված ձեռագրերի հիշատակարանները տե՛ս «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», ԺԵ դար, հ. Բ, էջ 57-58, 127-128, 301-304, 312-313, 445-446: 1484 եւ 1490 թթ. ձեռագրերինը՝ «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», ԺԵ դար, հ. Գ, էջ 58, 153-154:

42 Տե՛ս «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», ԺԵ դար, հ. Գ, էջ, 187, 230-231:

43 Տե՛ս անդ, էջ 265-266: Այս ձեռագրի գրչության վայրը Աղթամարը չէ, սակայն ծաղկողը մեզ հայտնի Կարապետ Աղթամարացին է:

44 Տե՛ս անդ, էջ 267-268:

45 Տես **Դ., Փիրղալեմեան**, Նշխարք պատմութեան հայոց, ՄՄ, ձեռ. թիւ 6332, էջ 222, թիւ 386:

46 **Դ. Փիրղալեմեան,** Նօտարք հայոց, էջ 159-160, թիւ 171:

47 Տես **Սահակ Մուրատեան, Ն. Մարտիրոսեան,** Յուցակ ձեռագրաց Մշոյ Ս. Առաքելոց-Թարգմանչաց վանքի եւ շրջակայից, Երուսաղէմ, 1967, հմր. 26: **Դ. Փիրղալեմեան**, Նօտարք հայոց, էջ 185, թիւ 218:

48 Տե՛ս « Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», ԺԵ դար, հ. Բ, էջ 102-104, 142-143:

49 Տե՛ս «Յուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի», թիւ 184:

թիվ 409)[50]: 1489 թ. Ներսեսն ընդօրինակում է Յայսմաւուրք (ՄՄ, ձեռ. թիվ 4728). այս ձեռագրում թեև գրչության վայրը, նշված չէ, սակայն պարզ է, որ Աղթամարի վանքն է: Ներսեսը դառն կսկիծով գրում է, որ այդ թվականին վախճանվեց իր եղբայրն ու Աղթամարի Կաթողիկոսը՝ Ստեփաննոսը[51]:

Հակոբ կրոնավոր

Հակոբ կրոնավորի ծնողներն են Հովսեփը եւ Փաշամելիքը, ուսուցիչներն են՝ Հայրապետ կրոնավորը (հավանաբար մեզ արդեն հայտնի Հայրապետ գրիչը), Հովհաննես կրոնավորը եւ տեր Թուման:

1458 թ. Հակոբ գրիչն ընդօրինակում է Մաշտոց (ՄՄ, ձեռ. թիվ 959): 1460 թ.՝ Աւետարան, որը ծաղկում է Մուրադ սարկավագը (իմա՛ Կարապետ քահանա ծաղկողը), կազմում՝ Ներսես սարկավագը (ՄՄ, ձեռ. թիվ 7627): 1484 թ. ընդօրինակում է Աւետարան, որը ծաղկում է Կարապետը (ՄՄ, ձեռ. թիվ 9233): Այս ձեռագրի օրինակը նրան շնորհում է իր վարպետ Հովհաննես կրոնավորը: 1493 թ. գրիչն ընդօրինակում է Աւետարան, որը ծաղկում է Պարսամը[52] (ՄՄ, ձեռ. թիվ 4937)[53]:

Մատթեոս արեղա

Մատթեոս գրիչի ծնողներն են Կարապետը եւ Խոնձա խաթունը, նրա հորեղբայրը Հովհաննես եպիսկոպոսն է, ուսուցիչը՝ Հակոբ կրոնավորը (հավանաբար մեզ հայտնի Հակոբ գրիչը): Մատթեոս գրիչից մեզ է հասել երեք Աւետարան եւ մեկ Շարակնոց: Շարակնոցը գրվել է 1491 թ. (Երուսաղեմ, ձեռ. թիվ 1741): Երեք Աւետարանների ծաղկողն էլ Հովսեփ կրոնավորն է, երկուսի կազմողը՝ Աբրահամ Արծկեցին: Այս ձեռագրերից առաջինը գրվել է 1496 թ. (ՄՄ, ձեռ. թիվ 10956), մյուս երկուսը՝ 1497 թ. (ՄՄ, ձեռ. թիվ 158, 3534)[54]:

Թումա կրոնավոր

Ըստ մեր ունեցած տվյալների՝ 1495 թ. Աղթամարում Թումա անունով կրոնավորը ընդօրինակում է Աւետարան: Հիշատակարանում նա նշում է, որ իր ուսուցիչը Ներսես արքեպսիկոպոսն է՝ Ստեփանոս Կաթողիկոսի եղբայրը: Ցավոք, նրա գրչագիրը մեզ չի հասել[55]:

Գրիգոր արեղա

Գրիգոր արեղայի ծնողներն են Սեթը եւ Խալ խաթունը (Սարգիս եւ Խալիմ), ուսուցիչն է Թումա քահանան (թերեւս Գրիգոր գրչի որդի Թումա քահանա գրիչը): Գրիգոր արեղայից մեզ է հասել երկու Աւետարան, գրված 1470 եւ 1497 թթ. (ՄՄ, ձեռ. թիվ 4970, Օքսֆորդ, 9)[56], իսկ 1479 թ. գրված Աւետարանը համարվում է կորած[57]:

Հովհաննես գրիչ

---

50 Տե՛ս «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», ԺԵ դար, հ. Բ, էջ 385-386:

51 Տե՛ս «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», ԺԵ դար, հ. Գ, էջ 133-135:

52 Պարսամի 1491թ. նկարազարդած մեկ Աւետարան եւս ունենք, որում, սակայն, գրչության վայրը եւ գրիչը նշված չեն՝ ՄՄ, ձեռ. թիւ 9660, տե՛ս «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», ԺԵ դար, հ. Գ, էջ 184:

53 Տե՛ս «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», ԺԵ դար, հ. Բ, էջ 101-102, 143-145: «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», ԺԵ դար, հ. Գ, 63-64, 191-192:

54 Տե՛ս «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», ԺԵ դար, հ. Գ, էջ 176-177, 243-245:

55 Տե՛ս «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», ԺԵ դար, հ. Գ, էջ 211: Գ. Սրուանձտեանց, «Թորոս Աղբար», հ. Բ., էջ 446-447:

56 Տե՛ս «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», ԺԵ դար, հ. Բ, էջ 304-305: «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», ԺԵ դար, հ. Գ, 1967, էջ 245-256:

57 Տե՛ս «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», ԺԵ դար, հ. Բ, էջ 439: Ս. Հայկունի, Բագրեւանդ ջրաբաշխ գաւառ, Էջմիածին, 1894, էջ 362:

Հովհաննես աբեղան 1484 թ. ընդօրինակում է Շարակնոց (ՄՄ, ձեռ. թիվ 1585), 1485 թ.՝ եւս մեկ Շարակնոց (ձեռագիրը կորած է), 1489 թ.՝ Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» աղոթագիրքը (ՄՄ, ձեռ. թիվ 5177)[58]:

Մկրտիչ գրիչ: Մկրտիչ գրիչի ծնողներն են Թուման եւ Շահլբաթը: Այս գրիչից մեզ են հասել երկու ձեռագրեր. Մաշտոց՝ ընդօրինակված 1460 թ. (ՄՄ, ձեռ. թիվ 5470) եւ Գանձարան՝ 1466 թ. (ՄՄ, ձեռ. թիվ 5376)[59]:

Ստեփաննոս աբեղա: Ստեփաննոսի ծնողներն են Մկրտիչն ու Գոհարմելեքը, նա հիշում է նաեւ իր եղբայրներին եւ քրոջը: Այս գրիչից մեզ հասել է երեք Աւետարան՝ գրված 1452 թ. (Նոր Ջուղա, ձեռ. թիվ 55), 1453 թ. (ՄՄ, ձեռ. թիվ 5513)[60], երրորդը կորած է եւ հայտնի չէ նաեւ գրչության թվականը[61]: 1447 թ. Աղթամարում Ճաշոց է ընդօրինակել Ստեփաննոս աբեղան: Ձեռագիրը կորած է, սակայն կարող ենք ենթադրել, որ գրիչը նույն Ստեփաննոսն է[62]:

Մի շարք գրիչներից մեզ են հասել մեկական մատյաններ, պահպանվել են նաեւ այլ, մասամբ Աղթամարում գրված ձեռագրեր:

1467 թ. Աղթամարում **Կիրակոս Ջոշկանցը** ավարտին է հասցնում մի Ճառընտիրի ընդօրինակություն, որն սկսել էր Բաղեշում[63]: Կիրակոս գրիչը որպես իր ուսուցիչներ նշում է Հովհաննես Մանկասարենցին եւ տեր Թումային: 1492 թ. **անանուն գրիչը** Թումա Մինասենցի Գանձարանից ընդօրինակություն է կատարում (ՄՄ, ձեռ. թիվ 4782): Ձեռագրում, թեեւ գրչության վայրը նշված չէ, սակայն Թումա Մինասենցի հիշատակարանից գիտենք, որ նա իր Գանձարանն ընդօրինակել էր Աղթամարի Ս. Խաչի միաբանների համար (ՄՄ, ձեռ. թիվ 5521): Ուստի եւ կարող ենք ենթադրել, որ անանուն գրիչի ընդօրինակությունը եւս Աղթամարում է եղել[64]: 1494 թ. Աղթամարում գրվել է Աւետարան: Ձեռագիրը մեզ չի հասել, պահպանված հիշատակարանը չի տալիս գրիչի անունը, այլ միայն՝ գրչության վայրը, թիվը եւ ստացողի անունը՝ Հովհաննես[65]:

ԺԶ-ԺԹ դդ. Աղթամարում գրված քիչ ձեռագրեր են հասել՝ մեզ:

Հովսեփ գրիչը ընդօրինակել է Ժողովածու 1503 թվականին (ՄՄ, ձեռ. թիվ 2033), եւ երեք Շարակնոց. առաջինը՝ 1504 թ., մյուսները՝ 1512 թթ. (ՄՄ, ձեռ. թիվ 10741, Վենետիկ ձեռ. թիվ 770, 1356): 1511 թ. **Հովհաննես քահանան** ընդօրինակում է Աւետարան (ՄՄ, ձեռ. թիվ 5226), 1526 թ. **Հակոբ գրիչը**՝ Աղուէսգիրք (Մաղնիսի, ձեռ. թիվ 97), 1560 թ. **Գրիգոր քահանան**՝ Աւետարան (ՄՄ, ձեռ. թիվ 4848), 1592 թ. **Մելքեսեթ գրիչը**՝ Սաղմոսարան (ՄՄ, ձեռ. թիվ 5986):

1691 թ. **Թումա քահանան** Աւետարան է ընդօրինակել (ՄՄ, ձեռ. թիվ 8888), 1666 թ. **Հայրապետ գրիչը**՝ Աստուածաշունչ: Հետագայում այս ձեռագիրը ԺԷ դարում գրված անթվական մեկ Աստուածաշնչի հետ դրվել է ընդհանուր կազմի մէջ (ՄՄ, ձեռ. թիվ 6753): Այս դարաշրջանում **տեր Սուքիաս գրիչը** գրել է Ժողովածու (ՄՄ, ձեռ. թիվ 10065): ԺԷ

58 Տես «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», ԺԵ դար, հ. Գ, էջ 74, 135-136:

59 Տես «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», ԺԵ դար, հ. Բ, էջ 145, 247-248:

60 Տես անդ, էջ 23, 37:

61 Տես «Ցուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի», թիւ 228:

62 Տես «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», ԺԵ դար, հ. Ա, էջ 609:

63 «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», ԺԵ դար, հ. Բ, էջ 256-257: **Ղ. Փիրղալեմեան**, Նստարք հայոց, էջ 229-230, թիւ 273:

64 Տես «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», ԺԵ դար, հ. Գ, էջ 185:

65 Տես անդ, էջ 202: Մ. Բարխուդարյան, Արցախ, 1895, էջ 112:

դարին վերագրվող Աւետարան է պահպանվել՝ գրչության թվականն ու գրիչն անհայտ (ՄՄ, ձեռ. թիվ 5578):

ԺԸ դարից միայն մեկ ձեռագիր է հասել՝ Մաշտոց ձեռնադրության, գրված 1741 թ. (ՄՄ, ձեռ. թիվ 6011):

Վեց ձեռագիր էլ ունենք ԺԹ դարից: 1824 թ. Հովհաննես Ե Կաթողիկոս Շատախցու (1823 – 1843) պատվերով **Ղազար Խալիֆյանցը** գրում է Աղթամարի Աթոռի պատմությունը (ՄՄ, ձեռ. թիվ 5467): Հաջորդը **Եզնիկ Ներկարարյան Մոկացու** հեղինակած Քարոզգիրքն է՝ 1887-1893 թթ.: Այս ձեռագիրը ծաղկել է Գեորգ վարդապետ Եղեսյանը, պատվիրել՝ Հովսեփ վարդապետ Թովմասյանը (ՄՄ, ձեռ. թիվ 5264): 1889 թ. **Մատթեոս վարդապետ Խիզանցին** ընդօրինակում է «Բուրաստան հոգեւոր» խորագրով Քարոզգիրք՝ նույնպես Հովսեփ վարդապետի համար (ՄՄ, ձեռ. թիվ 5270): Մխիթարյան միաբանության անդամ **Ներսես վարդապետ Սարգիսյանը** Աղթամարում ընդօրինակում է երկու ձեռագիր՝ Յովհան Ոսկեբերան՝ 1848/9 թթ. (Վենետիկ, ձեռ. թիվ 652), «Հաւաքումն բանից նախնեաց»՝ 1849 թ. (Վենետիկ, ձեռ. թիվ 678). այս երկու ձեռագրերը մասամբ գրվել են Աղթամարի մոտակա գրչության կենտրոններում՝ Վան, Լիմ, Կտուց, Վարագ: Աղթամարի վերջին՝ **Խաչատուր Բ Ծիրոյան** Կաթողիկոսի պատվերով ընդօրինակվում են երկու Ձեռնադրության Մաշտոցներ. գրիչներն անհայտ (ՄՄ, ձեռ. թիվ 5534, 5564): Հոչակավոր այս վանքում հայության կյանքը կանգ առավ 1915 եղեռնալից թվականին:

Ամփոփելով կարող ենք ասել՝ Աղթամարի Ս. Խաչ վանքի գրչության կենտրոնը թողել է ծանրակշիռ ձեռագրական ժառանգություն: Հատկապես ԺԴ-ԺԵ դարերում ձեռագրաստեղծման գործն Աղթամարում շարունակական մի շղթա է, ուր գրչության արվեստը փոխանցվում է սերնդեսերունդ, վարդապետից՝ աշակերտին, հանդես են գալիս նաեւ գրիչների տոհմեր:

Ակնարկում ներկայացրել ենք Աղթամարի վանքից մեզ հասած 101 ձեռագիր, որոնցից 89-ը գտնվում են Մաշտոցի անվան Մատենադարանում, 12-ը՝ այլ հավաքածուներում: Նշել ենք նաեւ այժմ կորած, սակայն տարբեր աղբյուրներից հայտնի աղթամարյան 34 ձեռագիր (կից տալիս ենք ձեռագրերի ամբողջական ցուցակը): Չի բացառվում, որ կան նաեւ Աղթամարում գրված այլ մատյաններ, որոնք կամ գրկվել են հիշատակարանից, կամ հիշատակարաններում չի նշվում գրչության վայրը: Սակայն այն ինչ հասել է մեզ, արդեն իսկ մի մեծ մշակութային ժառանգություն է եւ անհերքելի ապացույցն է այն բանի, որ այսօր հայությունից ամայացած Աղթամարում ողջ միջնադարում կերտվել է հայկական եւ միայն հայկական մշակույթ: Ավելացնենք, որ Աղթամարը, ինչպես նաեւ Վանա լճի մյուս կղզիները՝Լիմ եւ Կտուց անապատներով եղել են նաեւ ձեռագրապահպանման խոշոր կենտրոններ եւ չնայած Առաջին աշխարհամարտի տարիներին եղած ձեռագրական մեծ կորուստներին, այս կենտրոններից մի քանի հարյուր ձեռագրեր են փրկվել ու տեղափոխվել Սուրբ Էջմիածին, իսկ այնտեղից՝Երեւանի Մաշտոցի անվան Մատենադարան:

ԱՂԹԱՄԱՐԻ ՎԱՆՔԻ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՑՈՒՑԱԿ

ՄԱՇՏՈՑԻ ԱՆՈՒԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ[66]

1. Ձեռ. թիւ 158, Աւետարան, 1497 թ., գրիչ՝ Մատթէոս կրօնաւոր, ծաղկող՝ Յովսէփ կրօնաւոր, սպացող՝ Թումայ, (թուղթ, 347 թերթ, 17.8x13)
2. Ձեռ. թիւ 207 (նաեւ՝ Վարագ), Աստուածաշունչ, 1421-1422 թթ., գրիչ՝ Թումայ աբեղայ, կազմող՝ Թումայ աբեղայ (գրիչը), սպացողք՝ Յովհաննէս վարդապետ, Սաղաթէլ աբեղայ, (թուղթ, 560 թերթ, 28x18.3)
3. Ձեռ. թիւ 208, Մասունք Նոր Կտակարանի, 1277 թ., գրիչ՝ Սիմէոն, սպացող՝ Խաչատուր քահանայ, (թուղթ, 222 թերթ, 24.7x17)
4. Ձեռ. թիւ 959, Մաշտոց, 1458 թ., գրիչ՝ Յակոբ, սպացող՝ Աւէտիս տանուտէր, (թուղթ, 310 թերթ, 27x18)
5. Ձեռ. թիւ 976, Ժողովածոյ, 1316 թ., գրիչ՝ Դանիէլ եպիսկոպոս, սպացող՝ Տիրացու կրօնաւոր, (թուղթ, 292 թերթ, 33.5x23)
6. Ձեռ. թիւ 994, Ճառընտիր, 1409 թ., գրիչ՝ Դանիէլ քահանայ, սպացող՝ Յովաննէս տանուտէր, (թուղթ, 484 թերթ, 31.5x22)
7. Ձեռ. թիւ 1585, Շարակնոց, 1484 թ., գրիչ՝ Յովհաննէս, սպացող՝ գրիչը, (մագաղաթ (թուղթ՝ 12 թերթ), 224 թերթ, 12.7x8.6)
8. Ձեռ. թիւ 2001 (ԺԵ դ. այլ ձեռագրի հետ միասին), Ժողովածոյ, 1373 թ., գրիչք՝ Կարապետ քահանայ, Թումայ աբեղայ, սպացող՝ Ստեփանոս քահանայ, (թուղթ, ընդհանուրը՝ 247 թերթ, 14.5x11)
9. Ձեռ. թիւ 2033, Ժողովածոյ, 1503 թ., գրիչ՝ Յովսէփ, սպացողք՝ Մկրտիչ քահանայ, Յովանէս քահանայ, Փոխան սարկաւագ, (մագաղաթ, 286 թերթ, 9.2x6.5)
10. Ձեռ. թիւ 2632, Աւետարան, 1471 թ., գրիչ՝ Թումայ քահանայ, ծաղկող՝ Կարապետ քահանայ, սպացող՝ Մարտիրոս Բառեցի, (թուղթ, 322 թերթ, 27x18.5)
11. Ձեռ. թիւ 2788, Մաշտոց, 1463 թ., գրիչք՝ Գրիգոր քահանայ եւ որդին՝ Թումայ քահանայ, սպացող՝ Մարտիրոս, (թուղթ, 376 թերթ, 27x18.5)
12. Ձեռ. թիւ 2843, Աւետարան, 1354 թ., գրիչ՝ Կարապետ կրօնաւոր, ծաղկող՝ Զաքարիա, կազմող՝ Ներսէս, սպացող՝ Անանիա տանուտէր, (թուղթ, 318 թերթ, 23.2x15.5)
13. Ձեռ. թիւ 3534, Աւետարան, 1497 թ., գրիչ՝ Մատթէոս աբեղայ, ծաղկող՝ Յովսէփ, կազմող՝ Աբրահամ Արծկեցի, սպացող՝ Բէկի, (թուղթ, 352 թերթ, 18x13)
14. Ձեռ. թիւ 3806, Յայսմաւուրք, 1444 թ., գրիչ՝ Գրիգոր քահանայ, սպացող՝ Ստեփաննոս քահանայ, (թուղթ, 702 թերթ, 36x24.5)
15. Ձեռ. թիւ 3848, Աւետարան, 1458 թ., գրիչ՝ Ներսէս աբեղայ, սպացողք՝ Աստուածա-

66 Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա, կազմ.՝ Օ. Եգանյան, Ա. Ջեյթունյան, Փ. Անթաբյան, Երեւան, 1965, հ. Բ, կազմ.՝ Օ. Եգանյան, Ա. Ջեյթունյան, Փ. Անթաբյան, Երեւան, 1970, հ. Գ, կազմ. Ա. Մալխասյան, Երեւան, 2007:

տուր, Ստեփաննոս քահանայք, (թուղթ, 270 թերթ, 20x15)

16. Ձեռ. թիւ 4201, Մաշտոց, 1492 թ., գրիչք՝ Հայրապետ աբեղայ, Կարապետ քահանայ, ծաղկող եւ կազմող՝ Կարապետ քահանայ (գրիչը), սպացողք՝ Պաւղոս հիւսն, Միրան մահտեսի, (թուղթ, 367 թերթ, 27x18)
17. Ձեռ. թիւ 4436, Աւետարան, 1447 թ., գրիչ, ծաղկող եւ կազմող՝ Թումայ Մինասենց, սպացող՝ Մովսէս Ուրանցի, (թուղթ, 141 թերթ, 27x18)
18. Ձեռ. թիւ 4674, Սարգիս Շնորհալի, Մեկնութիւն Կաթողիկեայց, 1333 թ., գրիչ՝ Կարապետ կրօնաւոր, սպացող՝ Յակոբ տանուտէր, (թուղթ, 513 թերթ, 47x32)
19. Ձեռ. թիւ 4687, Ճաշոց, 1312 թ. (Ա), 1371 թ. (Բ), գրիչ՝ Դանիէլ կրօնաւոր (Ա), Զաքարիա կրօնաւոր (Բ), ծաղկող՝ Դանիէլ (գրիչը), սպացող՝ Դանիէլ գրիչ եւ քոյրը՝ Մարիանէ (Ա), Զաքարիա գրիչ (Բ), (թուղթ, 592 թերթ, 42.5x30.5)
20. Ձեռ. թիւ 4695, Ճաշոց, 1421 թ., գրիչ՝ Թումայ կրօնաւոր, սպացող՝ Յովհաննէս կրօնաւոր, (թուղթ, 468 թերթ, 41x30)
21. Ձեռ. թիւ 4728, Յայսմաւուրք, 1489 թ., գրիչ՝ Ներսէս եպիսկոպոս, սպացող՝ Վարդան, (թուղթ, 513 թերթ, 36x26)
22. Ձեռ. թիւ 4738, Ճաշոց, 1319 թ., գրիչ՝ Կարապետ կրօնաւոր, սպացողք՝ տէր Ստեփաննոս, Կարապետ կրօնաւոր, (թուղթ, 264 թերթ, 32x23)
23. Ձեռ. թիւ 4767, Գանձարան, 1484 թ., գրիչ՝ Թումայ քահանայ, սպացող՝ Սարգիս, Եղիսաբեդ, (թուղթ, 314 թերթ, 27x17.5)
24. Ձեռ. թիւ 4775, Մաշտոց, 1471 թ., գրիչ՝ Հայրապետ աբեղայ, ծաղկող՝ Կարապետ քահանայ, կազմողք՝ հիւսն Թումայ, Աւետիս, սպացող՝ գրիչը, (թուղթ, 360 թերթ, 27x18)
25. Ձեռ. թիւ 4782, Գանձարան, 1492 թ., սպացող՝ Գրիգոր, (թուղթ, 329 թերթ, 24.5 x 17)
26. Ձեռ. թիւ 4787, Մաշտոց, 1404 թ., Դանիէլ, սպացող՝ Կիրակոս քահանայ, (թուղթ, 220 թերթ, 24x16)
27. Ձեռ. թիւ 4801, Մաշտոց, 1312 թ., գրիչ՝ Դանիէլ կրօնաւոր, սպացող՝ Գրիգոր միայնակեաց, (թուղթ, 259 թերթ, 33x24)
28. Ձեռ. թիւ 4829, Աւետարան, 1444 թ., գրիչք՝ Հայրապետ աբեղայ, Թումայ Մինասենց, ծաղկող եւ կազմող՝ Թումայ Մինասենց (գրիչը), սպացողք՝ Թումայ Գաւաշեցի, Ծերուն աբեղայ (եղբարք), (թուղթ, 304 թերթ, 27.5x17.5)
29. Ձեռ. թիւ 4830, Աւետարան, 1452 թ., Գրիգոր քահանայ, սպացող՝ Սուլնամելէք, (թուղթ, 318 թերթ, 27x18.5)
30. Ձեռ. թիւ 4846, Մաշտոց, 1444 թ., գրիչ՝ Գրիգոր քահանայ, սպացող՝ Քարիմ, (թուղթ, 262 թերթ, 26x18)
31. Ձեռ. թիւ 4848, Աւետարան, 1560 թ., գրիչ՝ Գրիգոր քահանայ, սպացող՝ Կարապետ քահանայ, (թուղթ, 328 թերթ, 27x17)
32. Ձեռ. թիւ 4870, Ճաշոց, 1385 թ., Զաքարիա կրօնաւոր, սպացող՝ Թումայ եպիսկո-

պոս, (թուղթ, 476 թերթ, 34x25)

33. Ձեռ. թիւ 4881, Կիւրեղ Երուսաղէմացի, Կոչումն ընծայութեան, 1307 թ., գրիչ՝ Դանիէլ կրօնաւոր, սպացող՝ Մխիթար կրօնաւոր, (թուղթ, 275 թերթ, 34x25)
34. Ձեռ. թիւ 4890, Ճաշոց, 1313 թ., Դանիէլ կրօնաւոր, սպացողք՝ եղբարք Թ-ովմայ եւ Առաքել, (թուղթ, 290 թերթ, 33x23.5)
35. Ձեռ. թիւ 4908, Աւետարան, 1393 թ., Զաքարիա կրօնաւոր, կազմող՝ Եղիա Արգիլանցի, սպացող՝ Թադէոս կրօնաւոր, (թուղթ, 288 թերթ, 27x18)
36. Ձեռ. թիւ 4915, Աւետարան, 1355 թ., գրիչ՝ Գրիգոր, ծաղկող՝ Զաքարիա կրօնաւոր, Թ-ումայ քահանայ, սպացող՝ Մուրատ, (թուղթ, 288 թերթ, 27x18)
37. Ձեռ. թիւ 4923, Աւետարան, 1403 թ., գրիչ՝ Դանիէլ եւ հայրը՝ Կարապետ քահանայ, ծաղկող՝ Զաքարիա կրօնաւոր, կազմող՝ Մկրտիչ եպիսկոպոս, սպացող՝ Մխիթար քահանայ, (թուղթ, 264 թերթ, 27x18)
38. Ձեռ. թիւ 4928, Աւետարան, 1439 թ., գրիչ՝ Գրիգոր քահանայ, սպացողք՝ Թ-ուրանդ, Յովհաննէս, (թուղթ, 307 թերթ, 27.5x18)
39. Ձեռ. թիւ 4937, Աւետարան, 1493 թ., գրիչ՝ Յակոբ կրօնաւոր, ծաղկող՝ Պարսամ, սպացող՝ Խոջայ Միրիջան, (թուղթ, 324 թերթ, 26x17)
40. Ձեռ. թիւ 4941, Աւետարան, 1390 թ., գրիչ եւ ծաղկող՝ Զաքարիա կրօնաւոր, կազմող՝ Սարգիս քահանայ, սպացող՝ Թ-աղաչար, (թուղթ, 287 թերթ, 26x18)
41. Ձեռ. թիւ 4970, Աւետարան, 1470 թ., Գրիգոր աբեղայ, սպացող՝ Զուլալ խաթուն, (թուղթ, 320 թերթ, 27.5x17.5)
42. Ձեռ. թիւ 5177, Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, 1489 թ., գրիչ՝ Յոհաննէս աբեղայ, (թուղթ, 178 թերթ, 18.5x12.5)
43. Ձեռ. թիւ 5181, Մաշտոց, 1489 թ., գրիչ եւ ծաղկող՝ Կարապետ քահանայ, սպացող՝ Ղբչախ խաթուն, Մուրադ հիւսն, (թուղթ, 258 թերթ, 18 x 13)
44. Ձեռ. թիւ 5226, Աւետարան, 1511 թ., գրիչ՝ Յոհաննէս քահանայ, սպացող՝ Յուսուֆ, (թուղթ, 227 թերթ, 16.5x11)
45. Ձեռ. թիւ 5264, Եզնիկ Ներկարարեան Մոկացի, Քարոզգիրք, 1887-1893 թ., գրիչ՝ հեղինակը, ծաղկող՝ Գէորգ վարդապետ Եդեսեան, սպացող՝ Յովսէփ վարդապետ Թ-ովմասեան (թուղթ, 410 թերթ, 17.5x11)
46. Ձեռ. թիւ 5270, Բուրասպան հոգեւոր, 1889 թ., գրիչ՝ Մատթէոս վարդապետ Խիզանցի, սպացող՝ Յովսէփ վարդապետ Պապականցի, (թուղթ, 359 թերթ, 17.8x11.7)
47. Ձեռ. թիւ 5333, Աւետարան, 1476 թ., գրիչ՝ Թ-ումայ քահանայ, սպացող՝ տանուտէր Սադաղա Ծիրենց, (թուղթ, 335 թերթ, 26x17.5)
48. Ձեռ. թիւ 5376, Գանձարան, 1466 թ., գրիչ՝ Մկրտիչ աբեղայ, սպացող՝ Յովանէս քահանայ, (թուղթ, 242 թերթ, 24x16)
49. Ձեռ. թիւ 5417, Աւետարան, 1459 թ., գրիչ՝ Հայրապետ աբեղայ, ծաղկող՝ Մուրատ սարկաւագ, սպացող՝ Գիւլբահար, (թուղթ, 301 թերթ, 26.5x18)

50. Ձեռ. թիւ 5467, Ղազար Խալիֆեանց, Պատմութիւն Աթոռոյն Աղթամարայ, 1824 թ., գրիչ՝ հեղինակը, սպացող՝ Յովհաննէս կաթողիկոս Շապուհցի, (թուղթ, 55 թերթ, 23x16)
51. Ձեռ. թիւ 5470, Մաշտոց, 1460 թ., գրիչ՝ Մկրտիչ, սպացող՝ Վարդան տանուտէր, (թուղթ, 360 թերթ, 21.5x16)
52. Ձեռ. թիւ 5510, Աւետարան, 1399 թ., գրիչ՝ Զաքարիա կրօնաւոր, Դանիէլ սարկաւագ, ծաղկող՝ Թումայ քահանայ, սպացող՝ Դանիէլ տանուտէր, (թուղթ, 274 թերթ, 27x20.5)
53. Ձեռ. թիւ 5512, Աւետարան, 1418 թ., գրիչ՝ Թումայ կրօնաւոր, ծաղկող եւ կազմող՝ Դանիէլ քահանայ, սպացող՝ Խաչատուր, (թուղթ, 299 թերթ, 28x18)
54. Ձեռ. թիւ 5513, Աւետարան, 1453 թ., գրիչ՝ Սրեփաննոս, սպացող՝ Խաչատուր տանուտէր, (թուղթ, 289 թերթ, 28x18)
55. Ձեռ. թիւ 5514, Աւետարան, 1420 թ., գրիչ՝ Թումայ Մինասենց, ծաղկող՝ գրիչը, սպացող՝ Վարդան աբեղայ, (թուղթ, 302 թերթ, 28.5x17)
56. Ձեռ. թիւ 5515, Աւետարան, 1441 թ., գրիչ՝ Դանիէլ քահանայ, ծաղկող՝ Թումայ Մինասենց, սպացող՝ Մկրտիչ տանուտէր, (թուղթ, 283 թերթ, 27.5x18)
57. Ձեռ. թիւ 5521, Գանձարան, 1445 թ., գրիչ եւ ծաղկող՝ Թումայ Մինասեց, սպացող՝ գրիչը, (թուղթ, 436 թերթ, 27.5x18)
58. Ձեռ. թիւ 5534, Մաշտոց ձեռնադրութեան, ԺԹ դ., սպացող՝ Խաչատուր կաթողիկոս Աղթամարայ, (թուղթ, 39 թերթ, 24x15.5)
59. Ձեռ. թիւ 5542, Աւետարան, 1425 թ., գրիչ՝ Թումայ Մինասենց, ծաղկող՝ Մկրտիչ կրօնաւոր, սպացող՝ Խաթուն, (թուղթ, 243 թերթ, 27.5x18)
60. Ձեռ. թիւ 5543, Աւետարան, 1436 թ., գրիչ, ծաղկող եւ կազմող՝ Դանիէլ քահանայ, սպացող՝ Յովհաննէս տանուտէր, (թուղթ, 291 թերթ, 27x18)
61. Ձեռ. թիւ 5544, Աւետարան, 1460 թ., գրիչ՝ Ներսէս աբեղայ, սպացող՝ Թումայ եւ կինը՝ Նշխուն, (թուղթ, 321 թերթ, 27x18)
62. Ձեռ. թիւ 5558, Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, 1378 թ., գրիչ՝ Կարապետ քահանայ, սպացող՝ Թումայ քահանայ, (թուղթ, 320 թերթ, 24x16)
63. Ձեռ. թիւ 5564, Մաշտոց ձեռնադրութեան, ԺԹ դ., սպացող՝ Խաչատուր կաթողիկոս Աղթամարայ, (թուղթ, 42 թերթ, 25x18)
64. Ձեռ. թիւ 5578, Աւետարան, ԺԷ դ., (մագաղաթ, 246 թերթ, 20x14)
65. Ձեռ. թիւ 5581, Մաշտոց, 1480 թ., գրիչ՝ Հայրապետ աբեղայ, սպացող՝ Կարապետ տանուտէր, (թուղթ, 244 թերթ, 21x15.6)
66. Ձեռ. թիւ 5600, Ժողովածոյ, 1353-1354, գրիչ՝ Գրիգոր, սպացող՝ գրիչը, (թուղթ, 260 թերթ, 18x13)
67. Ձեռ. թիւ 5702, Մաշտոց, 1471 թ., գրիչ՝ Ներսէս եպիսկոպոս, ծաղկող՝ Կարապետ քահանայ, (թուղթ, 243 թերթ, 21.5x16.5)

68. Ձեռ. թիւ 5986, Սաղմոսարան, 1592 թ., գրիչ՝ Մէլքէսէթ, (թուղթ, 176 թերթ, 15x10)
69. Ձեռ. թիւ 6011, Մաշկոց ձեռնադրութեան, 1741 թ., (թուղթ, 52 թերթ, 16.5x11)
70. Ձեռ. թիւ 6324, Աւետարան, 1428 թ., գրիչ եւ ծաղկող՝ Թ-ումայ Միհասենց, սրացող՝ Աբրահամ կրօնաւոր (թուղթ, 308 թերթ, 27.5x18.5)
71. Ձեռ. թիւ 6326, Մաշկոց, 1499 թ., գրիչ՝ Թ-ումայ քահանայ, ծաղկող՝ Յովսէփ, սրացող՝ Խամօշ, (թուղթ, 409 թերթ, 26.5x18)
72. Ձեռ. թիւ 6402, Աւետարան, 1377 թ., գրիչ՝ Աւագ դպիր, ծաղկող եւ կազմող՝ Զաքարիա կրօնաւոր, սրացող՝ Յովհաննէս քահանայ, (թուղթ, 348 թերթ, 24x17.5)
73. Ձեռ. թիւ 6753 (երկու ձեռագիր), Ասպուաձաշունչ, ԺԷ դար (Ա), 1666 թ. (Բ), գրիչ՝ Հայրապետ (Բ), սրացող՝ Մելքիսէթ քահանայ (Ա), (թուղթ, ընդհանուրը՝ 409 թերթ, 19.5x15.3)
74. Ձեռ. թիւ 7585, Աւետարան, 1490 թ., գրիչ՝ Հայրապետ արեղայ, ծաղկող՝ Կարապետ քահանայ, սրացող՝ Դաւլաթ խաթուն (թուղթ, 269 թերթ, 27x18)
75. Ձեռ. թիւ 7627, Աւետարան, 1460 թ., գրիչ՝ Յակոբ, ծաղկող՝ Մուրատ սարկաւագ, կազմող՝ Ներսէս սարկաւագ, սրացող՝ Խոնձա, (թուղթ, 337 թերթ, 26.5x17.5)
76. Ձեռ. թիւ 7632, Աւետարան, 1462 թ., գրիչ՝ Գրիգոր քահանայ եւ որդի՝ Թ-ումայ քահանայ, սրացող՝ Սարգիս, Խաչատուր, փէր Աւագ (եղբարք), (թուղթ, 323 թերթ, 27x18)
77. Ձեռ. թիւ 7846, Մաշկոց, 1461 թ., գրիչ՝ Գրիգոր քահանայ եւ որդի՝ Թ-ումայ քահանայ, սրացող՝ Խաչատուր Շատվանցի, (թուղթ, 346 թերթ, 28x18.8)
78. Ձեռ. թիւ 8888, Աւետարան, 1691 թ., գրիչ՝ Թ-ումայ քահանայ, սրացողք՝ Սրեփանոս տանուտէր, Գուլազիզ դարբին, (թուղթ, 337 թերթ, 26.5x18.1)
79. Ձեռ. թիւ 8928, Աւետարան, 1470 թ., գրիչ՝ Հայրապետ արեղայ, սրացող՝ փէր Մկրտիչ, (թուղթ, 291 թերթ, 26.8x18.4)
80. Ձեռ. թիւ 9093, Ճաշոց, 1412 թ., գրիչ՝ Դանիէլ քահանայ, կազմող՝ Դաւիթ (1474 թ.), սրացողք՝ Յովհաննէս, Սրեփանոս կրօնաւորք, (թուղթ, 435 թերթ, 40x27)
81. Ձեռ. թիւ 9216, Աւետարան, 1455 թ., գրիչ՝ Հայրապետ արեղայ, սրացողք՝ Սրեփանոս եւ Աբրահամ կրօնաւորք, (թուղթ, 12 թերթ, 30.7x21.8)
82. Ձեռ. թիւ 9233, Յիշատակարան Աւետարանի, 1484 թ., գրիչ՝ Յակոբ կրօնաւոր, ծաղկող՝ Կարապետ վարդապետ, սրացողք՝ խոջայք Սաղաղայ, Թ-ումաբէկ (եղբարք), (թուղթ, 4 թերթ, 20x15.5)
83. Ձեռ. թիւ 9274, Աւետարան, 1454 թ., գրիչ՝ Գրիգոր քահանայ, սրացող՝ Ատոմ քահանայ, (թուղթ, 20 թերթ, 24.9x17.2)
84. Ձեռ. թիւ 10065, Ժողովածոյ, ԺԷ դ., գրիչ՝ փէր Սուքիաս, (թուղթ, 63 թերթ, 21.2x15.5)
85. Ձեռ. թիւ 10116, Աւետարան, 1368 թ., գրիչ՝ Կարապետ քահանայ, սրացող՝ Սրեփանոս քահանայ, (թուղթ, 17 թերթ, 27.5x21.5)
86. Ձեռ. թիւ 10451, Թ-ումայ Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, 1303 թ.,

գրիչ՝ Դանիէլ կրօնաւոր, սպացող՝ Զաքարիա Ա կաթողիկոս Աղթամարցի, (թուղթ, 325 թերթ, 32.6x24.4)

87. Ձեռ. թիւ 10522, Աւետարան, ԺԳ դ., գրիչ՝ Զաքարիա կրօնաւոր, (թուղթ, 287 թերթ, 31x21.5)
88. Ձեռ. թիւ 10741, Շարակնոց, 1504 թ., գրիչ եւ ծաղկող՝ Յովսէփ, սպացող՝ Մեսրոպ քահանայ, (թուղթ, մագաղաթ, 291 թերթ, 13x8.4)
89. Ձեռ. թիւ 10956, Աւետարան, 1496 թ., գրիչ՝ Մատթէոս աբեղայ, ծաղկող՝ Յովսէփ, կազմող՝ Աբրահամ Արծկեցի, սպացող՝ Շիրին տնտես, (թուղթ, 321 թերթ, 17x12.3)

ՁԵՌԱԳՐԱՏՈՒՆ ՍՐԲՈՑ ՅԱԿՈԲԵԱՆՑ, ԵՐՈՒՍԱՂԷՄ[67]

Ձեռ. թիւ 1741, Ժողովածոյ (ծիսական), 1491 թ., գրիչ՝ Մատթէոս կրօնաւոր, սպացող՝ գրիչը, (թուղթ, 748 էջ, 8x13)

ՁԵՌԱԳՐԱՏՈՒՆ ՄԽԻԹԱՐԵԱՆՑ Ի ՎԵՆԵՏԻԿ[68]

1. Ձեռ. թիւ 678 (հմր. 305) (նաեւ՝ Վարագ, Վան, Լիմ, Կտրուց), Հաւաքումն բանից նախնեաց, 1849 թ., գրիչ՝ Ներսէս վրդ. Սարգսեան, սպացող՝ գրիչը, (թուղթ, 236 թերթ, 36x22.7)
2. Ձեռ. թիւ 770 (հմր. 475), Շարակնոց, 1512 թ., գրիչ եւ ծաղկող՝ Յովսէփ, սպացող՝ Յովհաննէս քահանայ, (թուղթ, 321 թերթ, 9.5x13)
3. Ձեռ. թիւ 1365 (հմր. 476), Շարակնոց, 1512 թ., գրիչ եւ ծաղկող՝ Յովսէփ, սպացողք՝ Մկրտիչ կրօնաւոր, Յովհաննէս քահանայ, (թուղթ, 321, 8.5x12.5)
4. Ձեռ. թիւ 652 (հմր. 1622) (նաեւ՝ Վարագ, Կտրուց), Յովհան Ոսկեբերան, 1848/9 թթ., գրիչ՝ Ներսէս Սարգիսեան, (թուղթ, 317, 22.5x35.2)

ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆՔ[69]

1. Ձեռ. հմր. 55, Աւետարան, 1452 թ., գրիչ՝ Ստեփաննոս աբեղայ, կազմող՝ Պարսամ աբեղայ, սպացող՝ Մկրտիչ տանուտէր, (թուղթ, 287, 27.2x18)
2. Ձեռ. թիւ 409 (հմր. 64), Աւետարան, 1475 թ., գրիչ՝ Ներսէս արքեպիսկոպոս, սպացողք՝ Յովանէս եւ Մկրտիչ քահանայ, (թուղթ, 334, 22x17)
3. Ձեռ. թիւ 527 (հմր. 66), Աւետարան, 1478 թ., գրիչ՝ Հայրապետ, սպացող՝ Դուռդանէս, (թուղթ, 220, 26x18.2)
4. Ձեռ. թիւ 403 (78), Աւետարան, 1494 թ., գրիչ՝ Թումայ քահանայ, սպացող՝ Հերապետ, (թուղթ, 337, 26.7x18)

---

67 Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. Զ, կազմ.՝ Նորայր եպս. Պողարեան, Երուսաղէմ, 1972:

68 Մայր Ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Բ, կազմ.՝ Բարսեղ վրդ. Սարգիսեան, Վենետիկ, 1924, հ. Դ, Ը, կազմ.՝ Սահակ վրդ. Ճեմճեմեան, Վենետիկ-Ս. Ղազար, 1993, 1998:

69 Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի, հ. Ա, կազմ.՝ Սմբատ Տէր-Աւետիսեան, Վիեննա, 1970:

ՁԵՌԱԳՐԱՏՈՒՆ Ի ԲՈՒԼԳԱՐԻԱ[70]

Ձեռ. թիւ 5, Աւետարան, 1454 թ., գրիչ՝ Գրիգոր քահանայ, սպացող՝ Ագոմ քահանայ, (թուղթ, 319, 24x17)

ՕՔՍՖՈՐԴ, ԲՈԴԼԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ[71]

Ձեռ. թիւ 9, Աւետարան, 1497 թ., գրիչ՝ Գրիգոր աբեղայ, սպացող՝ Ստեփաննոս, (թուղթ, 286 թերթ)

ՎՐԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ, ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՖՈՆԴ[72]

Ձեռ. թիւ 23, Աւետարան, 1426 թ., գրիչ՝ Թումայ կրօնաւոր, սպացողք՝ Յովաննէս, Շնահուր:

կորած ձեռագրեր

ՍԵԲԱՍՏԻԱ, ՍԲ. ՆՇԱՆ ՎԱՆՔ[73]

Ձեռ. թիւ 3 (այլ ձեռագրի հետ միասին), Թուղթք Պաւղոսի, 1309 թ., գրիչ եւ ծաղկող՝ Դանիէլ կրօնաւոր, սպացող՝ Գրիգոր կրօնաւոր, (թուղթ, ընդհանուրը՝ 355 թերթ, 23x16)

ԴԻԱՐԲԵՔԻՐ, ԱՐՂՆԻ[74]

Ձեռ. թիւ 119 (հմր. 19), Աւետարան, 1363 թ.

ԿԱՐԻՆ, ԱՐԾՆԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ[75]

Ձեռ. թիւ 19, Աւետարան, ԺԴ-ԺԵ դդ., գրիչ՝ Զաքարիա կրօնաւոր, սպացող՝ Յակոբ եպիսկոպոս, (թուղթ, 257 թերթ, 26x20)

ՄՈՒՇ, Ս. ԱՌԱՔԵԼՈՑ-ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՎԱՆՔ ԵՒ ՇՐՋԱԿԱՅՔ[76]

Ձեռ. թիւ 26, Աւետարան, 1457 թ., գրիչ՝ Ներսէս աբեղայ, սպացող՝ Խալիմ խաթուն եւ Ղըսմաթ, (թուղթ, 25x18)

---

70 Յուցակ հայերէն ձեռագրաց ի Բուլգարիա, կազմ.՝ Ներսէս Գասապեան, խմբ.՝ Օ. Եգանեան:

71 Calalogue of the Armenian manuscripts in the Bodleian library, by the rev. Sukias baronian and F. C. Conybeare F.B.A., Oxford, 1918.

72 Տվյալներն ըստ Լ. Խաչիկյանի, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԵ դար, հ. Ա, Եր., 1955:

73 Յուցակ հայերէն ձեռագրաց Ս. Նշանի վանուց ի Սեբաստիա, կազմ.՝ Թորգոմ արքեպ. Գուշակեան, Վիեննա, 1961:

74 Die Armenischen handschriften des klosters von Argni (Arghana). Von dr. Friedrich Müller. Wien, 1896, 3.

75 Յակոբ Ծ. վ. Քօսեան, Յուցակ հայերէն ձեռագրաց Արծնեան վարժարանի ի Կարին, «Հանդէս ամսօրեայ», 1961-1962 թթ:

76 Մուրատեան Սահակ, Մարտիրոսեան Ն., Յուցակ ձեռագրաց Մշոյ Ս. Առաքելոց-Թարգմանչաց վանքի եւ շրջակայից, Երուսաղէմ, 1967: Յուցակի ձեռ. թիվ 28 տես ՄՄ ձեռ. թիվ 5417:

ՄԱՂՆԻՍԱՅ[77]

Ձեռ. թիւ 97, Աղուէսագիրք, 1526 թ., գրիչ՝ Յակոբ կրօնաւոր, կազմող՝ Յուսեփ (Լիմ), (թուղթ, 319 թերթ, 24x17)

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ[78]

1. Ձեռ. թիւ 107, Աւետարան, 1392 թ., գրիչ՝ Կարապետ քահանայ, սպացող՝ Թադէոս կրօնաւոր, (թուղթ, 300 թերթ, 19x28)
2. Ձեռ. թիւ 168, Աւետարան, 1446 թ., գրիչ՝ Հայրապետ աբեղայ
3. Ձեռ. թիւ 184, Աւետարան, 1461 թ., գրիչ՝ Ներսէս, (թուղթ, 336 թերթ, 19x27)
4. Ձեռ. թիւ 228, Աւետարան, ԺԵ դ., գրիչ՝ Սրեփաննոս աբեղայ, սպացող՝ Էլեքսան, (թուղթ, 258 թերթ, 18x24:

ԸՍՏ Դ. ՓԻՐՂԱԼԵՄԵԱՆԻ

Փիրղալեմեան Դ., Նօրարք հայոց, Կ.Պոլիս, 1888 թ.

1. Նօրարք, էջ 57-58, թիւ 58, Ճաշոց, 1419 թ., գրիչ՝ Թումայ կրօնաւոր, սպացող՝ Մկրտիչ քահանայ
2. Նօրարք, էջ 128, թիւ 137, Յայսմաւուրք, 1442 թ., գրիչ՝ Թումայ կրօնաւոր
3. Նօրարք, էջ 134-135, թիւ 146, Ճաշոց, 1444 թ., գրիչ՝ Դանիէլ քահանայ, սպացող՝ Առաքել քահանայ
4. Նօրարք, էջ 136-139, թիւ 149, Մաշտոց, 1445 թ., գրիչ՝ Թումայ Միհասենց, սպացող՝ Յովհաննէս կրօնաւոր
5. Նօրարք, էջ 159-160, թիւ 149, Աւետարան, 1449 թ., գրիչ՝ Ներսէս, սպացող՝ Հայրապետ քահանայ
6. Նօրարք, էջ 170, թիւ 189, Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, 1452 թ., գրիչ՝ Թումայ Միհասենց
7. Նօրարք, էջ 185, թիւ 218, Աւետարան, 1457 թ., գրիչ՝ Ներսէս
8. Նօրարք, էջ 193, թիւ 230, Աւետարան, 1459 թ., գրիչ՝ Հայրապետ աբեղայ
9. Նօրարք, էջ 199-200, թիւ 237, Ճառընտիր, 1461 թ., գրիչ՝ Գրիգոր, սպացող՝ Ատոմ կրօնաւոր
10. Նօրարք, էջ 216, թիւ 249, Մայր Մաշտոց, 1463 թ., գրիչ՝ Թումայ, սպացող՝ տանուտէր Աւիտոն
11. Նօրարք, էջ 229-230, թիւ 273, Ճառընտիր, 1467 թ., գրիչ՝ Կիրակոս Ջօշկանց
12. Նօրարք, էջ 231, թիւ 275, Ճառընտիր, 1467 թ., գրիչ՝ Հայրապետ աբեղայ, սպացող՝ տանուտէր Յոհաննէս

---

77 Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց ի Կեսարիա, Զմիւռնիայ եւ ի շրջակայս նոցին, նկրգ.՝ Տրդատ եպս. Պալեան, կազմ.՝ Գէորգ Տէր-Վարդանեան, Երեւան, 2002:

78Յուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի, կազմ.՝ Երուանդ Լալայեան, Թիֆլիս, 1915 թ.:

Փիրղալեմեան Ղ., Նշխարք պատմութեան հայոց, ՄՄ, ձեռ. թիւ 6273[79]

1. Նշխարք, էջ 108-111, Մեկնութիւն Կաթողիկեայց թղթոց Սարգսի Շնորհալւոյ, 1306 թ., գրիչ՝ Դանիէլ կրօնաւոր, սպացող՝ Զաքարիա կաթողիկոս Աղթամարցի
2. Նշխարք, էջ 324-325, Ճառընտիր, 1476 թ., գրիչ՝ Հայրապետ աբեղայ, սպացող՝ Մինայ խաթուն
3. Նշխարք, էջ 330, Աւետարան, 1484 թ., գրիչ՝ Հայրապետ աբեղայ, սպացող՝ Գուհար
4. Նշխարք, էջ 334-335, Շարակնոց, 1485 թ., գրիչ՝ Յովհաննէս աբեղայ, սպացող՝ Ստեփաննոս կրօնաւոր
5. Նշխարք, էջ 371-372, Մաշտոց, 1496 թ., գրիչ՝ Կարապետ քահանայ, սպացող՝ Մուրատ

Փիրղալեմեան Ղ., Նշխարք պատմութեան հայոց, ՄՄ, ձեռ. թիւ 6332[80]

էջ 222, թիւ 386, Մայր Մաշտոց, 1501 թ., գրիչ՝ Կարապետ քանահայ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՅԼԵՒԱՅԼ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

1. Աւետարան, 1358 թ., գրիչ՝ Կարապետ կրօնաւոր, սպացող՝ Թանգ խաթուն[81]
2. Ճառընտիր, 1389 թ., գրիչ՝ Կարապետ քահանայ, սպացող՝ Ստեփանոս միայնակեաց[82]
3. Աւետարան, 1418 թ., գրիչ՝ Թումայ[83]
4. Աւետարան, 1479 թ., գրիչ՝ Գրիգոր աբեղայ, սպացող՝ Առաքել քահանայ[84]
5. Աւետարան, 1494 թ., սպացող՝ Յոհանէս[85]
6. Աւետարան, 1495 թ., գրիչ՝ Թումայ[86]
7. Ճաշոց, 1447 թ., գրիչ՝ Ստեփաննոս[87]:

---

79 Տվյալներն ըստ Լ. Խաչիկյանի, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԴ դար, Երեւան, 1950 թ., ԺԵ դար, հ. Բ-Գ, Եր., 1958, 1967: Տես նաեւ Մաթեւոսյան Ա, Գրչության տեղանունների այբբենական քարտարան, Մաշտոցի անվան Մատենադարան, անտիպ:

80 Տես նաեւ Մաթեւոսյան Ա, Գրչության տեղանունների այբբենական քարտարան, Մաշտոցի անվան Մատենադարան, անտիպ:

81 Մաքսուդեան Մեսրոպ վրդ., Ագուլիսի եւ շրջակայքի ձեռագրերը, «Արարատ», 1911 թ., էջ 562-563, Ագուլիս, 18:

82 Տե՛ս անդ, էջ 759-765, Ագուլիս, 24:

83 Ե. Լալայեան, Ջավախք, հ. Ա, Թիֆլիս, 1897, Բ., էջ 310:

84 Ս. Հայկունի, Բագրեւանդ ջրաբաշխ գաւառ, Էջմիածին, 1894, էջ 362:

85 Մ. Բարխուդարյան, Արցախ, 1895, էջ 112:

86 Գ. Սրուանձտեանց, «Թորոս Աղբար», Բ, Կ.Պոլիս, 1885, էջ 446-447:

87 Տվյալն ըստ Լ. Խաչիկյանի, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԵ դար, հ. Ա, Եր., 1955, էջ 609: